

զուն բորբոսի տարբեր է պարզ խօսակցութեան լեզուէն : Աւրոպացւոյ մը համար՝ ամենէն մեծ դժուարութիւնը հնչմունքն է . ամենայն բառ կրնայ հնչուիլ հինգ զանազան եղանակով . բայց ամէնն ալ այնպէս որոշ չեն , որ անվարժ ականջ մը կարենայ զանազանել զանոնք : Այս միավանկ բառերը այնպէս սաստիկ շուտութեամբ մէկմէկու կը յաջորդեն , որ շատ հեղ կարծես թէ գիր մ' ալ կը թողուի , և երկու միավանկն ալ մէկ կ'ըլլայ . հագագային ձայնէ մը պէտք կ'ըլլայ շուտ մը անցնիլ տափակ ձայնի մը , սուլելու ձայնէ մը բերանալիւր ձայնի . երբեմն պէտք է որ ձայնդ քմային ըլլայ , երբեմն կուկորդային , և գրեթէ միշտ ոնկաձայն : Վարդգէսերս գրեթէ յիսուն անգամ ծառայիս առջև կը կարդայի՝ հասարակաց խօսելէն առաջ . և սակայն իր շարունակ սրբագրելէն վերջն ալ կ'ըսէին որ քարոզին տասը մասէն հազու թէ իրեքը կը հասկընային : Վարեբաղգարար Չիները սաստիկ համբերող են . և կը զարմանան , որ մէկ տգէտ օտարական մը կարող ըլլայ սորվելու իրենց լեզուէն երկու բառ մը :

Արսէն թէ շատ անգամ Չինք երգիծաբանութիւններ կը շարագրեն , որոնց եթէ գրուածքին նայիս՝ իմաստնին մաքուր և վսեմ բաներ են , բայց եթէ հնչմունք միտ դնես՝ ծաղրական կամ յիմարական իմաստներ կը բովանդակեն : Չինաց լեզուին մէջ երբեմն մէկ բառ մը իրեք կամ չորս հազար գրանշաններու կը համաձայնի , բոլորովին մեր լեզուաց հակառակ՝ ուր բիւրաւոր զանազան բառեր նոյն գրերով կը բացատրուին . և մինչ մեր լեզուաց մէջ գրերը բառերու ու ձայներու նշանակ են , Չինաց մէջ իմաստից նշան են տառերը կամ ձևերը , անոր համար աւելի բանանշան կրնան ըսուիլ քան բառանշան կամ գրանշան : Մարդկութեան առաջին դարերուն մէջ կամ 'ի սկիզբն քաղաքականութեան՝ մինչդեռ մարդուս միտքը շատ զարգացած չէր ու գաղափարները չէին աճած , այս

բանանշանները շատ պիտանի և յարմար էին քան մեր գրերը՝ դիւրաւ և յստակ իմացընելու համար իր միտքը առ այս . բայց քաղաքականութեան և մտաց զարգացման ատեն , ինչպէս հիմա , շատ անկատար ու դժուար և մտաց արգելք է այս կերպը : Ինչպէս որ կը փորձեն գրագէտք Չինաց , ազգայինք և օտարք . վասն զի հիմա Չինաց լեզուն 214 արմատական նշաններ ունի , 40,000 ալ հաստատուն կամ բանանշաններ , անկէ զատ բիւրաւորներ ալ՝ որոնց իմաստը հաստատուն ու ամենայայտ չէ . անով բառագրոց մէջ մեծ խառնակութիւն կայ , ուսանողաց մեծ շփոթութիւն , և երկար ժամանակի կուրուստ սորվելու միջոց :



ԾԱՂԿԱՔԱՂ ԵՒՐՈՊԱԿԱՆ



Հասար , Յոյս և Սեր :

Ս'ի մարդ , ցածո զանձն քո . խոնարհեաց էջ յերկիր , յանցաւոր մահացու . արկ զձակատ քո 'ի հող և 'ի փոշի , և հեծու թիւնք քո անմիտ թար լցուցեն զսահման երկրի , ուր աթոռն է թշուառութեան , և զոր ետ քեզ Աստուած վրէժխնդիրն՝ յաքսոր և 'ի գերեզման , զոր օրինակ թէ անկելոյ թագաւորի դուզնաքեայ իմն սահմանեսցի վիճակ : Այլ աղէ զինչ ասեմ . նա մանաւանդ ուրախ լեր , և ընդ նորոյն Սիոնի գոչեա թէ՛ « Արանի յանցուածոյն որ արժանի գտաւ զայդպիսի ունել Փրկիչ մեծ » : Արօնք շնորհեն առ քեզ բազմապատիկ առաւել քան զոր կորուսեալ էր քո . նա ինքն վերամբառնայ զքեզ յայն ծագ կատարելութեան , որ գերագոյն քան զհրեշտակս ընծայեցուցանէ զանձն քո՝ որքան առաքինութեանն յաղթանակք վեհագոյնք իցեն քան զանմեղութիւնն անդորրաւէտ և առանց միցանացն : Օջրացեալդ աստուածային շնորհքը զչարամէտ յօժարութիւնս ամենայն նըկուն արարեալ ընկձեսցես : Ս'ի որ այ-

տուհետե զապականեալ բնութենէն մարդոյն բողոքիցէ առ իս . չկամիմ ես , նա և չտեսանեմ իսկ այլ բնութիւն , բայց որ վերականգնեալն է և զարդաբեալ : Հաւատք բանան ինձ զերկինս առաջի , զտգիտութիւնս իմ լուսաւորեն , պնդեն զվարանս մտաց իմոց , և ՚ի բաց վանեալ զոր զնովան մածաներ մնայլ նսեմաստուեր՝ հոսանս լուսոյ գընացուցանեն : Յոյսն զկնի գնայ հետոյ նորա , կենաց զմայլումն անսպառ և մըտերիմ ընկեր Սիրոյ : Հաւատալ , յուսալ , սիրել , այս է աւագիկ կրօնն ամենեկին : Եւ ոչ մի զոհ ծանր գայցէ յորժամ աներկբայ առաջի կայ յոյս . պարտք ամենայն քաղցր են սիրողին : « Սիրեա , և զոր ինչ միանգամ հաճոյ թուեսցի քեզ՝ կատարեա » , ոմն յեկեղեցւոյ վարդապետացն քարոզէր . զի չեն այլ ինչ կամք սիրողին՝ բայց ՚ի կամաց սիրեցելոյն : Ս՛վ օրէնք սիրոյ , օրէնք վսեմ և սքանչելի , որ այն ինչ իցէ զոր զլասցի քեզ ճշմարիտն քրիստոնեայ : Ըստ օրինակի վարդապետին անցանեն նոքա յաշխարհի ՚ի բարիս գործել : Վըթութիւն իմն անսահման , որպէս և անսահման է որ շնչէ զայն ՚ի նոսա Մտուած , կենագործէ զամենայն գործս նոցա , լցուցանէ զմիտս նոցա բովանդակ , և զզգացմունս նոցա արգասաւորէ : Ս՛ի թէ անձանց ինչ կեան դոքա , եթէ վասն այլոց արդեօք . տես զիարդ ՚ի թիկունս սրանան ամենայն ցաւոց մարդկութեան . տես զնոսա զի հանգոյն սամարացւոյն արկանեն զիւզն պատուական ՚ի վերս եզրարց իւրեանց : Ոչ մի ինչ լքանէ զնոսա , և չիք ինչ որ զնոսա պարտասիցէ . որչափ և թշուառական իցես , այնքան առաւել սիրելի նոցին լինիցիս : Կանձք նոցա ՚ի ժառանգութիւն են տնանկաց . կեանք նոցա , ճիգն , արգասատանք , արտասուք , հասարակաց են ամենեցուն որոց կրիցեն : Ըզբատ իցես դու , հիւանդ , նրւազեալ ՚ի զօրութենէ . աղէ եկ , դիւրեսցեն քեզ նոքա . վէրս ինչ ծածուկս զգայցէ սիրտ քո , զոր ցանկալի իցէ քեզ ՚ի դառն գթութենէ անձնասէր մար-

դասիրութեանն ծածկելոյ , ընթա , անպատում իմն միսթարութեամբ լըցուցեն սոքա զսիրտ քո , որ ամաքեսցէ զաղէտս քո և ՚ի մուացօնս դարձուցէ քեզ զնոսա : Սասն նոցա չիք որ յաշխարհի ոտիս , և չիք որ օտար . զմարդիկ և եթ խնդրեն նոքա : Եթէ յանցեար ինչ երբէք , աներկիւզ յառաջ մատիր , սուրբ են ՚ի թշնամանիչ կըշտամբանաց շրթունք նոցա , արգասատեսցեն քեզ , արտասուակցորդ լիցին ընդ քեզ , տկարս իբրև զքեզ դաւանեսցեն զանձինս իւրեանց , և քաղցրաժպիտ յուսոյն շրթամբք ցուցցեն քեզ զՓրկիչն հասարակաց : Հարք առաքինիք , որդիք սիրասունք , փեսայք զգաստք , մտերիմ բարեկամք , և հպատակք են հաւատարիմք . և որպիսի զօրութիւն է նոցա . սակայն և այնպէս ոչ միայն ոչ հպարտանան ՚ի վերայ անձանց , այլ և հեծեն անդադար ընդ անարժանութիւն իւրեանց . զանձինս իբրև զճառայս անպիտանս առ ոչ ինչ համարին , և յառատաբաշխ ողորմութենէ անտի անսպառ բարութեանն զփոխարինացն ընդունել ակն ունին տրիտուր զխոստացեալն առ նոսա : Բաժանեալք յերկրաւորն բարեաց՝ երկնաւոր հայրենեայն են ցանկացողք , յոր յառաջեալ կարապետեաց նոցա Վրկիչն : Սատիք , հաճոյք , ճոխութիւնք , նա զի և ամենայն իրք աշխարհի ոչինչ են առաջի նոցա . ոչ զմին աստի սիրեն նոքա , և ոչ այլում իմիք փափագեն , բայց վշտայն խաչի : Ըրտասուք՝ ցող խնդութեան են նոցա . գձձութիւնք՝ փառք . տանջանք՝ մահիճ հանգստեան : Ըճ ապտակ յաջոյ ծնօտս նոցա , և ահա անդէն դարձուցեն քեզ զմիւսն . բարձ ՚ի նոցանէ զբաձկոն , և զշապիկս շնորհեսցեն քեզ մտադիւր : Ստարանդի հարածեա զնոսա , արկ զնոսա ՚ի բանտի , բարձ զկեանս նոցա կտտամահ քերանօք . նոքա առ մեղսաբաւիչն Մտուած ազեքս արկցեն վասն քո . և քաղցր նոցին բարբառք՝ օրհնութիւն լիցին ձայնք : Ըյլ աղէ մարդիկ իցեն սոքա , զորոց են բանքս . ոչ , այլ աշակերտք Վրիս-

տոսի : Ար մարդկային իմն գիւտս հա-
մարիցի զկրօնս , հասպա ելցէ նա և ա-
սիցէ . Սարթ էր և ինձ զսոյն հնարել
վարդապետութիւն , փոխել զքնութիւն
մարդոյն , և ստեղծել զհաւատս , զհոյս
և զ[]էր :

ՏԸ ԼՂ ՄՐՆԵ

ՊԼՏՄՈՒԹԻՒՆ

Տամիան Լուդովիկոս յիսն դաւաճանք :

Ընդեալ դարուն կէսերը՝ Վաղղիոյ
մէջ հասարակաց մտաց խռովութիւն
ու այլայլութիւն մը կար , որ երթալով
որ օրուան վրայ կը զայրանար : Յանսե-
նեանք ու Սոլինեանք անհատնում վե-
ճերով իրարու հետ կը հակառակէին .
խորհրդարաններն ու կղերը կրօնական
ու քաղաքական կարգերու վրայօք յայտ-
նի թնամութեան հետ էին իրարու
մէջ . կառավարութիւնը իշխանութիւն
ցուցուցած էր երկու կողմնակցութիւն-
ներուն վրայ ալ , և անոնց գծաութիւն-
ները աւելի բորբոքելու առիթ եղած
էր . տէրութեան եկամուտները նուա-
զած ու զէշ վիճակի մէջ էին . սակերը
սաստիկ ծանրացած էին ժողովրդեան
վրայ , և Ընդղիոյ դէմ պատերազմն ալ
ձախողութիւններով առաջ կ'երթար :
Ըսանկով ժողովրդեան մէջ ընդհանուր
մեծ տագնապութիւն մը կար տէրու-
թեան դէմ , ու ո և իցէ բանի չհանե-
լով՝ սաստիկ կը գրգռուէին , որովհետեւ
այսպիսի խեղճ՝ վիճակի մը մէջ շատ
դժուարին էր որ կարենար պետութիւ-
նը ճարտար կերպով մը դառնացեալ
սրտերու բարկութիւնը ինջեցընել . ա-
մենայն տեսակ բնաւորութիւն ունե-
ցող մարդիկ յանդգնական արհամար-
հութեամբ մը լեցուած էին , երիտա-
սարգներուն երևակայութիւնը տաք-
ցած էր , միտլ բանիւ՝ ամենքը անհան-
գիստ էին . և ոչ միայն պաշտօնէից ,
այլ մինչև թագաւորին վրայ գանգատ-
նին կը բարձրացընէին :

Ըստպիսի գրքի մը մէջ եղած ատեն
Վաղղիա , 1757 տարւոյն յունուարի
5^{էն} 1 ուղովիկոս ժե Վաղղիոյ թագա-
ւորը իրիկուան վեցին միջոցները կ'եր-
թար կառք մտնելու Աերսայէն՝ Վրիա-
նոն դառնալու համար . մէյ մ' ալ յան-
կարծակի մարդ մը արքունի պահա-
պաններուն ու զուիցերացուց բազմու-
թիւնը ճղքելով՝ առաջ անցաւ , և Լյ-
էն դքսին ու թագաւորին անդրանիկ
որդւոյն հետ զարնուելով՝ հասաւ թա-
գաւորին , ու անոր աջ կողմը դանա-
կով մը հարուած տուաւ : Ընդղի-
կոս մէկէն այլայլած պուռաց . « Չեռ-
քով սաստիկ հարուած մը տուաւ մէկը
ինձի » . ետքը ձեռքը մարմնոյն վրայ
տանելով , ու հանելու ատեն տեսնելով
որ արիւնով զանգուեր է՝ « Ա իրաւո-
րուեր եմ » ըսաւ : Լյոյն միջոցին դար-
ձաւ ետեւը մէյ մը նայեցաւ , ու մարդ
մը տեսնելով , որ անշարժ կեցեր էր՝
զլիարկը գլուխը , « Ըսիկայ է զիս զար-
նողը , կանչեց . բռնեցէք վնքը , բայց
ամենևին փսաս մը մի ընէք իրեն » :
Վանակը բարեբաղդաբար մեն անդին
անցած չէր . անոր համար թէպէտ բո-
լոր Աերսայ սկզբան սաստիկ տխրեցաւ ,
բայց լսելով որ թագաւորին կեանքը
վտանգի մէջ չէր՝ ամենքը հանգարտե-
ցան . և իրաւցընէ հարուածը հետեանք
մը չունեցաւ :

Ըստ մարդասպանը , որ մէկէն բռու-
նուեցաւ , կը կոչուէր Ռոսպերդ Փրան-
կիսկոս Տամիան . ծնած էր 1715 տա-
րւոյն Ղա քաղաքին թեմին մէջ , ու
ստորին աստիճանէ էր : Պզտիկուցմէ
'ի վեր մուլեկան յօժարամտութիւններ
կը ցուցընէր , որով Սաբանայ Ռոպերդ
անունն առած էր . ծառայութեամբ
անցուց իր կենաց մէկ մասը , ու այն
միջոցին գողութիւններ և ուրիշ պա-
խարակելի գործողութիւններ ալ կ'ը-
նէր : Շատ տուներէ վնասուեցաւ իր
զինուութեանը , անհաւատարմութեա-
նը , յանդուգն ու կուռարար կերպին
համար . և վերջապէս պարապօրդ ա-
ռանց գործողութեան մը կ'անցընէր ի-
րեն կեանքը , իր վերջի տէրէն գողցած